ԿՐՈՆԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ-ՀԱՎԱՔ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Արարատյան Հայրապետական Թեմի Արաբկիրի Հայորդյաց Տանը մայիսի 17-ին, Թեմի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի նախաձեռնությամբ, իր աշխատանքն սկսեց Կրոնակրթական ուսուցիչների մեկօրյա համագումար-հավաքը:

Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի շուրջ քառասուն ուսուցիչների, երկու հարյուր աշակերտների, արժանապատիվ Տեր Հայրերի և բազմաթիվ հրավիրյալների մասնակցությամբ գումարված այս հավաքը պատահական չէ, որ կրում էր «Անհատ, ընտանիք, ընկերություն» վերտառությունը և տեղի էր ունենում Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից Ընտանիքի օրվան նվիրված տօնակատարության օրերին:

Ընդհանրական Տերունական աղոթքից հետո, ողջույնի բացման խոսքով ներկաներին դիմեց ՔԴԿ-ի տնօրեն Ա. Գաբուճյանը: Իր շնորհակալությունը Հայորդաց Տների գրասենյակի տնօրեն պրն. Ս. Սիմոնյանին և Արաբկիրի Հայորդաց Տան տնօրենուհի տիկ. Բ. Ավետիսյանին հայտնելուց հետո, Ա. Գաբուճյանը երախտիքի խոսքեր ուղղեց միջոցառմանը ներկա Տեր Տաթև և Տեր Շահե քահանաներին՝ հատկապես կարևորելով նրանց ոչ միայն ներկայությունը, այլև լիարժեք մասնակցությունն Աստվածահաճո այս գործին: Այնուհետև, իր դասախոսությունը Մատթեոսի Ավետարանի 14-րդ գլխի թեմաներով կառուցելով, նա խոսեց անհատի և ընտանիքի կյանքում Եկեղեցու ունեցած դերի մասին: Ավետարանում Հիսուսի հացի բազմացման օրինակով, հետևյալ զուգահեռն անցկացրեց. ինչպես Հիսուս հացը բազմացրեց ու, ժողովրդին գթալով, հոգաց նրանց քաղցը, այնպես էլ եկեղեցին, լինելով Հիսուս Քրիստոսի ներկայությունն իր մեջ ունեցող հաստատությունն ու նրա խորհրդանշական մարմինը երկրի վրա, իր առջև անհատին ու հասարակությանը «գթալու», «տալու» առաքելությունն ու պարտականությունն ունի:

Այնուհետև «Անհատը և Եկեղեցին», «Ընտանիքը և Եկեղեցին» դասախոսություններով հանդես եկան Տ. Տաթև քահանա Աբրահամյանը և Տ. Շահե քահանա Հայրապետյանը: Նրանք, իրենց խոսքերում Եկեղեցու աստվածաբանական բացատրությունը տալուց հետո, կարևորեցին անհատի դերը ինչպես ընտանիքում, այնպես էլ Եկեղեցում՝ նշելով, որ անհատը ինչքանով որ անբաժան մասն է իր ընտանիքի, նույնքանով էլ անքակտելի մասն է Մայր Եկեղեցու:

Համագումարի ընդմիջմանը գեղարվեստական համարներով հանդես եկան Արաբկիրի Հայորդյաց Տան սաները, որոնք իրենց կատարումներով գեղագիտական հաճույք պատճառեցին ներկաներին, Կոմիտասյան երգով հոգևոր նոր լիցք հաղորդեցին միջոցառման մասնակիցներին:

Այնուհետև ՔԴԿ-ի ուսուցիչների անունից երախտիքի խոսք հայտնեց Ա. Սեդրակյանը: Նմանատիպ հավաքները նա կարևորեց հոգևոր շինության և

վերանորոգության առումով՝ նշելով, որ ինչպես եկեղեցի հաճախելն ու արարողություններին և ծիսակատարություններին մասնակցելը պարտադիր է կրոնակրթական համակարգում գործող ուսուցչի հոգևոր աճի համար, այնպես էլ նման հավաքների մասնակցությունն անհրաժեշտ է գիտելիքների վերագտման, ուսուցչական փորձառության փոխանակման և հոգևոր հաղորդակցության առումով:

Հավաքի վերջում Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին արքեպ. Ներսիսյանի հայրական օրհնության խոսքը ներկաներին փոխանցեց Տ. Տաթև քահանան՝ հույս հայտնելով, որ նմանատիպ ձեռնարկները կդառնան ամենամյա ու ավանդական և կնպաստեն մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակությանը՝ ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց Մայր Եկեղեցվո:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ
Արարատյան Հայրապետական Թեմ